ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՄՇԱԿ» ԹԵՐԹՈՒՄ (1915 – 1916թթ.)

Տ.Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

1915 – 1916թթ. Օսմանյան Թուրքիայում հայ աղգաբնակչության ցեղասպանության վերաբերյալ մեծաքանակ և տարատեսակ վավերագրերի շարքում մեծ նշանակություն ունեն այդ ժամանակաշրջանում հրատարակված հայ պարբերական մամուլի նյութերը:

Արևելահայ իրականության նշված ժամանակաշրջանի առավել ազդեցիկ պարբերականներից էր լիբերալ-բուրժուական հոսանքի գաղափարախոս «Մշակ» լրագիր (1872 – 1921): 1872թ. ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունու (1845 – 1892) Թիֆլիսում հիմնադրած «Մշակ» թերթը, 1892թ. անցնելով Ալ.Քալանթարի, իսկ 1913թ. Համբարձում Առաքելյանի ձեռքը, ընթանում էր հայ լիբերալիզմի յուրահատուկ ուղիով[1]:

«Մշակ» թերթի էջերում լայնորեն լուսաբանվում էին Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները, Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածները և Արևմտյան Հայաստանի հայաթափումը: Թերթն ուշադրության կենտրոնում էր պահում հայերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը, պատերազմի տարիներին հայ փախստականներին օգնելու գործը և ռազմաճակատում հայ կամավորականների գործողությունները: «Մշակում» առավել հանգամանորեն, քան արևելահայ որևէ պարբերականում, մեկնաբանվում էր հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքը, բացահայտվում Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության հակահայկական, ջարդարարական բնույթը: Թերթը հրապարակել է լրագրական ամենատարբեր ժանրի նյութեր՝ առաջնորդողներ, պատմահրապարակախոսական հոդվածներ, ակնարկներ, թղթակցություններ, նամակներ, ռազմաճակատային լուրեր: Լրագրում լրատվական հարուստ նյութեր էին հրապարակվում կոտորածները դատապարտող համաշխարհային հասարակայնության արձագանքների մասին: Պարբերաբար անդրադարձ էր կատարվում Հայկական հարցի պատմությանը, ռուսական կովկասյան բանակի ռազմավարական և մարտավարական կարևոր գործողություններին, հայկական կամավորական շարժմանը և այլն: Նշված վիթխարի լրատվության վերաբերյալ արդեն իսկ պատկերացում են տալիս նրա խորագրերը՝ «Համաշխարհային պատերազմ», «Պատերազմ Թուրքիայի դեմ», «Բանասիրական», «Ներքին տեսություն», «Փախստականների մասին», «Տեղեկություններ գավառից», «Ներքին լուրեր», «Նամակ խմբագրությանը», «Արտաքին տեսություն», «Մամուլ» և այլն: Լրագրին աշխատակցում էին Ալ.Աբելյանը, Ա.Աթանասյանը, Դ.Անանունը, Դ.Բաշինջաղյանը, Ստ. Զորյանը, Շիրվանզադեն, Վ.Տերյանը, Լ.Քալանթարը, Եր. Տեր-Մինասյանը և շատ ուրիշներ: Նրա սեփական թղթակիցների խումբը ժամանակ առ ժամանակ մեկնում էր Արևմտյան Հայաստան, Պարսկաստան և այլուր՝ այնտեղից ուղարկելով հաղորդագրություններ, նամակներ և

---

[1] *Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Ե., 1981, էջ 865 – 866:*

հեռագրեր, որոնք պարունակում էին հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ, որ ճանաչողական արժեք ունեն Մեծ եղեռնի ուսումնասիրության համար: Արժանահավատ են նաև լրագրի արտասահմանյան թղթակիցների բազմաբնույթ տեղեկությունները:

Բազմազան են «Մշակի» լրատվության աղբյուրները: Պատերազմական գործողությունների մասին հիմնական տեղեկատվությունը ստացվում էր «Պետրոգրագի հեռագրական գործակալությունից» և Կովկասյան զորաբանակի շտաբից: Առաջին աշխարհամարտը լրագրի համար ներկայանում էր իբրև մի սոսկալի աղետ, որին ենթարկված էր Ռուսաստանը և «...մեր մասնավոր, սեփական հայրենիքը՝ Հայաստանը, որ 600 տարիներից ի վեր ենթակա է իր շրջապատող վայրագ, անկուլտուրական ցեղերի հարստահարություններին, կեղեքումներին...»[1]: Սակայն, սրան զուգահեռ, լրագիրը հայտնում է իր լավատեսությունը, որ սնվում էր արևելահայ լիբերալների վաղեմի ռուսական կողմնորոշման ակունքներից:

Լրագրի 1915թ. հունվար ամսվա համարները հիմնականում ողողված էին Առաջին աշխարհամարտի հետևանքով Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան հայ ազգաբնակչության աննախադեպ հոսքին, որոնց թիվը տարեսկզբին հասնում էր ավելի քան 80.000-ի՝ 40.000-ը Ատրպատականից, 40.000-ը՝ Թուրքիայից (1.I.1915թ.): Թվական տվյալներով և փախստականների շարժման ուղղությունն ուրվագծելով, «Մշակի» սեփական թղթակիցները մոայլ գույներով ներկայացնում էին նաև նրանց ողբերգական վիճակը: Արդեն 1915թ. հունվար ամսվա կեսերին փախստականների թիվը հասնում է մոտ 100.000-ի, որը գնալով աճում էր (10. I.1915թ.):

Արևմտյան Հայաստանի տարածքում և, հատկապես, 1914թ. վերջին սկսված Արդվին, Տանձոտ և Արդանուշ գավառներում հայ ազգաբնակչության հալածանքների, զանգվածային կոտորածների մասին տեղեկությունները թերթում ստացվում են արդեն 1915թ. փետրվար ամսից: Ուշադրության է արժանի այն փաստը, որ հասկանալի պատճառներով, շատ երկար ժամանակ էր անցնում, մինչև մի որևէ իրադարձության մասին տեղեկատվությունը հասնում էր խմբագրություն: Սովորաբար այդ ժամանակային տարբերությունը լինում էր մեկ-երկու ամիս: Երևի հենց սա էլ կարելի է համարել այն հիմնական պատճառներից մեկը, որ հնարավորություն չէր տալիս հայ ազգաբնակչության արևելյան հատվածին արագ կերպով արձագանքել Թուրքիայի տարածքում կատարվող իրադարձություններին: Այսպես, փետրվարի 6-ին արդեն ստացվում է մանրամասն տեղեկատվություն դեռևս 1914թ. նոյեմբերի 5-ից Արդվինում սկսված հայերի զանգվածային կոտորածների մասին: «Հովիվ» ստորագրող հեղինակը Արդվինի դեպքերի մասին գրում էր, որ թուրքերը «խնայում են փոքրերին և կանանց, որովհետև նախ՝ փոքր են, հնարավոր է մի երկու տարվա ընթացքում վարժեցնելով իրենց կրոնին համոզված մուսուլմաններ դարձնել և երկրորդ՝ ինչ վերաբերում է կանանց, նրանք չեն կարող որևէ մնասակար ղեր խաղալ և կամա թե ակամա դառնալու են թուրքերի համար երկրորդական կամ երրորդական կանայք»: Այնուհետև, նա մանրամասն, առանձին դրվագներով, նկարագրում է 1914թ. դեկտեմբերի 17-ից Արդանուշում և Տանձոտում տեղի ունեցած սպանդի մասին (6.II.1915թ.):

---

[1] Մշակ, 1. I. 1915: Այսուհետև «Մշակի» հղումները կտրվեն բնագրին կից.

1914թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915թ. հունվարի 5-ը Սարիղամիշի մոտ տեղի ունեցած ռուս-թուրքական ռազմական բախումը ավարտվում է ռուսական բանակի հաղթանակով: Թուրքական զորքերը նահանջում են՝ նահանջի ճանապարհին իրենց ամբողջ վայրագությունը թափելով տեղի հայ բնակչության վրա:

Հատկանշական է և այն, որ «Մշակում» տեղեկատվությունը բավական անկանոն էր ստացվում: Լրագիրը իր մի շարք համարներում, բավական տևական ժամանակ, պարզապես ոչ մի խոսք չի ասում Թուրքիայի տարածքում այդ ժամանակաշրջանում կատարվող իրադարձությունների մասին, իսկ երբեմն էլ այնքան նյութ է կուտակվում, որ իր համարը գրեթե ամբողջությամբ նվիրում է կոտորածների լուսաբանմանը: Դա բացատրվում է մի քանի հանգամանքով. նախ՝ «1914թ. հուլիսի 21-են բռնաշունչ կերպով սեպտեմբերվիք և իրադեի ուրֆի (պատերազմական վիճակ) հրապարակելուն շնորհիվ Թյուրքիո մեջ երթալով հաղորդակցությունը և տեղեկությունները ընդհատեցան: Իսկ կառավարական մանևրաները և ոչ մեկ մահկանացուի մատչելի կրնային ըլլալ, մանավանդ ռուս-թուրքական պատերազմը սկսելուն՝ այլևս ամեն կյանք ու շարժում կաշկանդման դատապարտվելով «ամեն ինչ պատերազմին պետք է պատկանի»-ն հրապարակվեցավ: Այդ սիստեմին տակ մենք ականատես եղանք, որ ամեն անհատ հազիվ կրնար իր մորթին վրա մտածել» (9. IV. 1915թ.):

Լրատվության անկանոն և անմխիթար վիճակի մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ հայ պարբերականները և՛ ֆինանսապես, և՛ տեխնիկապես շատ էին զիջում այդ ժամանակաշրջանում հրատարակվող եվրոպական և ռուսական պարբերականներին (14.IV. 1915թ.):

Եվ, վերջապես, Կովկասում հրատարակվող բոլոր թերթերը, այդ թվում նաև «Մշակը», հրատարակվում էին միայն զինվորական գրաքննության ստուգումից հետո: Սա ևս մեծապես խոչընդոտում էր լրատվության շարժին: Վերոհիշյալ ականատեսը նկարագրում էր նաև արևմտահայ մամուլի օրհասական վիճակը երիտթուրքական գրաքննության պայմաններում. «1914թ. օգոստոս-հոկտեմբեր արդեն պատրիարքարանն, առաջնորդարաններն և ազգային վարչությունք խստիվ լռեցուցին: Լրագիրները (օրաթերթերը) մեկ-մեկ խղճուկ, դժգույն երեսիկներու վերածված էին, որոնք Վոլֆի գործակալության սուտերը հազիվ կրնային պարունակել, շատ-շատ՝ սուլթանին ուղղյալ փոքր-ինչ գովասանքներ» (9. IV. 1915թ.): Թուրքական պաշտոնական զեկույցները վերածվել էին հակիրճ «ճակատներուն վրա նորություն չկա» արտահայտության: Ամբողջ այդ ժամանակաշրջանում օսմանյան հանրային կարծիքը Եվրոպայի մեջ ձեռք բերած հաղթանակների լուրերով «օրորվեցավ» :

1915թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին արևմտահայության կոտորածների մասին տեղեկատվության հոսքը զգալի չափով մեծանում է: Մեկը մյուսի հետևից լրագրի խմբագրությունը հաղորդագրություններ է ստանում իր սեփական թղթակիցներ Ատրպետից, Հայդարից, Գաղթականից և մյուսներից: Սակայն այս հաղորդագրությունները, նամակները, թղթակցությունները հիմնականում վերաբերում էին ռուս-թուրքական ռազմաճակատի շրջանում թուրքական զորքերի կատարած վայրագություններին:

---

[3] Ա. Անտոնյան, Մեծ ոճիր. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Ե., 1990, էջ 73:

Իսկ այն, ինչ այդ ժամանակ տեղի էր ունենում Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի այլ վայրերի հայության նկատմամբ, հիմնականում նշվում էր շատ աղոտ, կարճ հաղորդագրությունների տեսքով: Լրագրի ստացած այս նյութերից հատկապես մեծ նշանակություն ունեն Ատրպետի հաղորդագրությունները: Նրա հոդվածներում ոչ միայն ներկայացվում են թուրքական զորքերի կողմից հայ ազգաբնակչության նկատմամբ կիրառված բռնությունները, այլև բավական մանրամասն նկարագրվում էին բնակչության թվաքանակը, այլ ազգերի և հայ ազգաբնակչության թվական հարաբերակցությունները, ինչպես նաև տրվում որոշ պատմական ակնարկներ: Հիշատակության են արժանի, հատկապես, նրա «Արյան գիրը» («Մշակ». 10, 11 փետրվարի, 1915թ.), «Արյան ձոր» («Մշակ». 13, 14 փետրվարի, 1915թ.), «Դավաճաններ» («Մշակ». 17, 18, 19 փետրվարի, 1915թ.), «Թաթարների ավերածները» («Մշակ». 20փետրվարի, 3 մարտի, 1915թ.) և այլ հաղորդագրություններ: Դրանցում առկա նյութերը կարևորություն են ներկայացնում թուրքերի կողմից կոտորված հայերի թվաքանակի, ինչպես նաև հայ ազգաբնակչության կրած նյութական վնասների ուսումնասիրության համար: Նրա ներկայացրած՝ Օլթի, Արդահան և Արդվին գավառներում բնակվող 143265 հայերի նյութական վնասը կազմել է 12.470.000 (3. III. 1915թ.):

1915թ. ապրիլից արդեն տեղեկություններ են ստացվում Վանի վիլայեթում և, հատկապես, Վան քաղաքում կատարվող իրադարձությունների մասին: Ապրիլի 12-ին «Մշակի» սեփական թղթակից Արգար Պայազատը Դիադինից գրում է. «Բոլոր իմ քաղած տեղեկություններից պարզ է արդեն, որ ամբողջ Վանի վիլայեթը այրվում է... Բոլոր հայ գյուղերից, վաղօրոք կազմած ծրագրի համաձայն (ընդգծումը - Տ.Ս.), զինվորական պետքերի համար աշխատեցնելու պատրվակով հավաքում են արական սեռը և խմբերով հրացանի բռնում դյուղից հեռու: Այդ սոսկալի դավը միայն պարզվում է չորրորդ օրը, և այդ օրից սկսվում է փախուստը: Գործն սկսվել է ապրիլի 4-ից... Վանից ստացված տեղեկությունների համաձայն, այդ քաղաքն անցել է հայերի ձեռքը, որոնք դիմադրում են և սպասում են մեր տղերանց և հզոր Ռուսաստանի զորքերին...» (26.IV. 1915թ.):

Իսկ մի փոքր ավելի ուշ Հ.Առաքելյանը հայտարարում է. «Թե հեռագրական տեղեկությունները, թե մասնավոր լուրերը և թե եվրոպական լրագիրների հաղորդագրությունները այլևս ոչ մի կասկած չեն թողնում, որ Թյուրքաց Հայաստանում վերսկսվել է հայկական տարրի ջնջման ծրագրի գործադրությունը, և հայ ժողովուրդը ենթակա է բռնությունների, ավերումների և քայքայումների...» (2.V.1915թ.):

«Մշակի» էջերում կարելի է հանդիպել նշված իրադարձություններին առնչվող մի շարք ուշագրավ փաստաթղթերի: Հատկապես, հիշատակության են արժանի թերթում տպագրված՝ կաթողիկոս Գևորգ V-ի 1915թ. ապրիլի 7-ի պաշտոնական դիմումները ուղարկված Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուել II-ին, Անգլիայի թագավոր Գեորգ V-ին, ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին և Ֆրանսիայի նախագահ Պուանկարեին՝ «ի լուր այն արհավիրքների, որոնք պայթեցին հայ ժողովրդի գլխին Թուրքիայում» (4.V. 1915թ.):

1915թ. մայիսի 14-ին թերթը տպագրեց մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների համատեղ հայտարարությունը Բ.Դռանը՝ Թուրքիայում իրականացվող հայերի կոտորածների և գրանցում թուրքական իշխանությունների պատասխանատվության մասին (14.V.1915թ.): Հատկանշական է նաև այն, որ «Մշակի» կարծիքով, մեծ տերությունների համատեղ հայտարարությունը Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական դիմումների անմիջական հետևանքն էր (15.V.1915թ.):

Մայիսի 10-ին «Մշակ» թերթը ավետում է ռուսական զորքերի կողմից Վանի գրավման մասին՝ այն համարելով պատմական խոշոր դեպք: Լրագրի էջերը ողողվում են այս իրադարձության մասին հաղորդագրություններով և հոդվածներով: Վանի հայ ազգաբնակչության ինքնապաշտպանական մարտերը և ռուսական զորքի կողմից Վան քաղաքի գրավումը առավել մանրամասն ներկայացվում են «Մշակի» սեփական թղթակցի՝ Մտրակի՝ հենց Վանից ուղարկած հոդվածաշարում (6 - 14. V. 1915թ.):

Թուրքիայի տարածքում իրականացվող հայերի տեղահանությունների, ձերբակալությունների և կոտորածների մասի առավել ամբողջական տեղեկատվություն սկսում է տպագրվել լրագրում 1915թ. հուլիս ամսից: Այդպիսին է «Մշակում» հուլիսի 14-ին տպագրված «Հայերի վիճակը Թուրքիայում» հոդվածը, ուր ներկայացվում էր 1915թ. հուլիսի 4-ին կաթողիկոսի ստացած պաշտոնական նամակից մի քաղվածք. «...Թյուրքիո հայությունը դարեր ի վեր չտեսնված տագնապ կանցնե այժմ. համիդական շրջանին ստվեր բերող շրջանի մը մեջ կը գտնվինք, գյուղերու ավերում, սպանություն հայաբնակ բոլոր գավառներու մեջ, և ընդհանուր մեծ կոտորածներու փոխարեն ընդհանուր տարագրում... Ասկե զատ՝ առանց որևէ հանցանքի գրեթե ամեն քաղաքե և գյուղե իսլամական վայրեր ուղարկվեցան հազարավոր երևելի հայեր. եկեղեցականներ, մտավորականներ, հարուստներ ու կուսակցականներ, կամ անոնց հետ շփում ունեցող անհատներ: Կ.Պոլսեն 250-ե ավելի անձեր աքսորվեցան Զանդրլի (Կասթեմունի նահանգ) և Այաշ (Գաղաթիա), բայց գավառներուն աքսորականները շատ են թվով Կ.Պոլսո հետ բաղդատելով: Ասիկա որոշ ծրագրի մը արդյունք է. հայությունը նախ զինաթափ ընել և գլխավորները աքսորելով ահաբեկել, ապա ազգը ամբողջովին փճացնել»: Այնուհետև, նամակում խոսվում է արևմտահայությանը զանգվածային տեղահանումների և աքսորի, մասնավորապես Կիլիկիայի հայությանը Դեր-Զոր և Կոնիա աքսորելու մասին: Տեղահանված մերկ ու անապաստան բազմությունների հետ «Հարաբերության մտնելու կամ անոնց օգնություն հասցնելու համար եղած բոլոր դիմումներն անլսելի կը մնան ցարդ թյուրք կառավարությունեն, իսկ անոնց գյուղերն ու կալվածներն արդեն սկսած են հանձնվիլ իսլամներու, հատուկ հանձնաժողովի մը ձեռամբ» (14.VII. 1915թ.): Այստեղ գրեթե անսխալ ներկայացվում են այն նպատակները, որ իր առջև դրել էր երիտթուրքական իշխանությունը և այն հետևանքները, որ լինելու էին հայերի տեղահանման հետևանքով:

Այն, որ արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների քաղաքականությունը վաղօրոք կանխամտածված ու ծրագրավորված էր, 1915թ. ամռանից հետո ստացված տեղեկությունների հիման վրա արդեն անկասկած է դառնում «Մշակի» խմբագրության համար:

1915թ. սեպտեմբերին Հ.Առաքելյանը, հիմնվելով Պետրոգրադի հեռագրական գործակալության հաղորդման վրա, արձանագրում է. «Թյուրքիո Հայաստանը կազմող 7 վիլայեթներից 5-ի (նկատի ունի Սեբաստիայի, Էրզրումի, Բիթլիսի, Տրապիզոնի և Վանի վիլայեթները – Տ.Ս.) ամբողջ հայությունը ջնջված է: Մնում են երկու վիլայեթներ՝ Խարբերդի և Դիարբեքիրի, որոնց հայ ժողովրդի վիճակի մասին դեռ տեղեկություններ չունենք: Բայց ոչ մի կասկած չէ կարող լինել, որ այդ երկու վիլայեթներում ևս, որոնք սահմանակից են Միջագետքին, հայությունը կամ ջնջված է, կամ վտարված Միջագետք» (11.XI.1915թ.):

Այդ նույն ժամանակաշրջանում «Մշակը» թվական տվյալներ է հրապարակում արևմտահայության կորուստների մասին, հենվելով Կ.Պոլսի պատրիարքարանի՝ կաթողիկոսին հղած մի տեղեկագրի վրա: Թերթը նշում է, որ «Թյուրքիայի մեջ կոտորված, ջարդված, հարեմներ գերի տարված հայերի թիվը հասնում է 850.000-ի» (22.IX.1915թ.):

1915թ. դեկտեմբերին, հենվելով լորդ Բրայսի՝ անգլիական կառավարությանը ներկայացրած զեկուցումների վրա, «Մշակը» արձանագրում է, որ Թուրքիայի տարածքում «կոտորվել են մոտ մի միլիոն հայեր, այն է՝ Թյուրքիայի հայ ազգաբնակչության կեսը» (12.XII.1915թ.):

1916թ. սկզբին զգալիորեն կրճատվում է Թերթի լրատվության հոսքը: «Մշակի» համարներում հանդիպում են սոսկ կցկտուր լուրեր Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև տպագրվում են սեփական թղթակիցներից ստացված դեռևս 1915թ. ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մանրամասներ: Պատերազմական իրադրությունը, անշուշտ, իր կասեցնող հետևանքներն էր թողնում «Մշակի» հաղորդակցական հնարավորությունների վրա:

1916թ. փետրվարի 4-ին լրագիրը հայտնում է ռուսական զորքի կողմից Էրզրումի գրավման մասին և, այդ ժամանակից սկսած, Թերթի էջերը ողողվում են այդ խոշոր իրադարձության մանրամասնությունների, ինչպես նաև դրա արձագանքների մասին հոդվածներով, հեռագրերով ու հաղորդագրություններով:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո Էրզրումի հայ ազգաբնակչության նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականության, նպատակների, հայերի բռնագաղթի կազմակերպման և իրականացման մեխանիզմների, այս ամենի ականատես գերմանական սպաների վերաբերմունքի և, վերջապես, հայերի գույքի հետագա ճակատագրի մասին արժեքավոր տեղեկություններ կան բժիշկ Եր.Մինասյանի զեկուցման մեջ: Հեղինակը հենվել է ինչպես ականատես շատ հայերի վկայությունների, այնպես էլ Էրզրումի ամերիկյան հյուպատոսի, նրա կնոջ և ամերիկյան միսիայի հիվանդանոցի կառավարչի վկայությունների վրա: Ըստ նրա զեկույցի, «Պատերազմի սկզբում թյուրքերը հայերին պահանջ են դնում միանալ իրանց, բայց հայերը առարկում են, որ եթե իրանք միանան թյուրքի զորքի գործողություններին, դրանով վտանգի կենթարկեն Կովկասի իրանց միլիոնավոր եղբայրների կյանքը: Թյուրք իշխանությունները հաշտվում են այդ բացատրության հետ..., բայց, երբ Քերոկայի մոտ կրած

պարտությունից հետո իմանում են, որ ռուսական զորքի շարքերում կռվում են հայ կամավորներ, սաստիկ հուզվում են» (8.III. 1916թ.): «Կ.Պոլսից Էրզրում եկած մի թյուրք՝ Ջեմալ-Էֆենդին... գրգռում էր ժողովրդին՝ կոտորել հայերին»: Սրանից հետո սկսվում են հայերի կոտորածը և զանգվածային բռնի տեղահանությունը: Բայց «ավելի սոսկալի է բաբերդցիների գաղթեցումը» (9.III.1916թ.): «Բաբերդցիներին էլ տրապիզոնցիների նման գաղթեցնում են անսպասելի կերպով, կես գիշերին» (10.III.1916թ.): «Հայերին Էրզրումից գաղթեցնելուց մի քանի ժամանակ հետո թյուրքերը կազմում են լիկվիդացիայի հանձնաժողով հայերի գույքի համար», - նշում է թերթը (12.III. 1916թ.):

1916թ. մայիսին «Մշակը», բացառությամբ դեռևս տարեսկզբի համարներում հրապարակած մի շարք կցկտուր տեղեկությունների, արձանագրում է այն հաստատված իրողությունը «որ թյուրքական իշխանությունները բոլոր հայերին, որոնց չեն կարողացել կոտորել, քշել են դեպի Միջագետք, այն նպատակով, որ այնտեղ կլիմայի դաժանությունից, քաղցից մեռնեն: Ընդհանուր կարծիք է, որ այդ աքսորված, հալածական հայերի թիվը 500.000 է» (25.V.1916թ.):

1916թ. անապատներում էին գտնվում հայկական բոլոր գավառներից տեղահանված և բռնի տեղափոխված հայերը, որոնց միացել էին նաև Կ.Պոլսի շրջակայքից, Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից տարագրված հայերը[1]:

Այն, ինչ Թուրքիայի տարածքում և Միջագետքի անապատներում կատարվում էր հայ ազգաբնակչության հետ 1916թ. ընթացքում, բավական կցկտուր էր լուսաբանվում լրագրի էջերում: Առավել զարհուրելի եղեռնագործությունները և մեծագույն ջարդերը կատարվեցին 1916թ.՝ արդեն մեկ տարի այնտեղ գտնվող իրենց տներից և օջախներից բռնի տեղահանված հայ ժողովրդի մի ստվար հատվածի նկատմամբ: Անապատների մեջ թուրքական կառավարությունը կազմակերպեց երեք սոսկալի ջարդեր. առաջինը՝ Ռես-ուլ-Այնում, որին զոհ գնացին ավելի քան 70.000 մարդ: Երկրորդը՝ Ինթիլլիում՝ 50.000-ից ավելի մարդ: Այստեղ կենտրոնացված բնակչությունը հիմնականում աշխատում էր Բաղդադի երկաթուղու թունելի վրա: Երրորդ սպանդը տեղի ունեցավ Դեր-Զորում, ուր Զեքի բեյը 200.000-ի մոտ հայ սպանել տվեց[2]:

Դրան հակառակ, թերթում առավել շատ էին նախկինում 1915թ. ընթացքում, կատարված իրադարձությունների մասին վկայությունները, տեղեկագրերը, ինչպես նաև առօրյա կյանքի իրադարձություններին վերաբերող հոդվածները, վերլուծությունները և այլն:

Թեև 1915 - 1916թթ. Օսմանյան Թուրքիայում նրիտթուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացված բնաջնջման քաղաքականության շատ մանրամասներ մի շարք պատճառներով չեն լուսաբանվել կամ էլ մակերեսորեն են լուսաբանվել արևելահայ իրականության ամենաազդեցիկ լրագրերից մեկի էջերում, այնուամենայնիվ, անուրանալի է այն հսկայածավալ աշխատանքը, որ պատմական տվյալ

[1] Նույն տեղում, էջ 16:
[2] Նույն տեղում, էջ 18:

ժամանակաշրջանում կատարել է «Մշակ» թերթը Մեծ եղեռնի լուսաբանման, այն հասարակայնության ուշադրության արժանացնելու գործում:

ОСВЕЩЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ГАЗЕТЕ "МШАК" (1915 – 1916гг.)

Т.А.СААКЯН

Резюме

В восточноармянской действительности наиболее влиятельным периодическим изданием являлась газета "Мшак" (1872 – 1921гг.), на страницах которой широко освещались как события первой мировой войны, так и массовая резня и депортация западных армян в Турции.

Используя различные источники информации, газета разоблачает преднамеренность и планомерность организации резни армян младотурецким правительством и дает численные данные о потерях армян в Османской Турции в период геноцида.

Газета "Мшак" являлась одним из тех немногих периодических изданий, которые несмотря на цензуру и многочисленные преграды, продолжали систематически освещать геноцид армян.